

2002 թվական

▪ **Մասնակցություն «Համատիրության շենքերի կայունացման / քաղաքային բնակարանների վերանորոգման դրամաշնորհներ» ծրագրին**

Կազմակերպությունը մասնակցություն է ունեցել Ուրբան ինստիտուտի կողմից իրականացվող «Համատիրության շենքերի կայունացման / քաղաքային բնակարանների վերանորոգման դրամաշնորհներ» ծրագրի «Բացատրական քարոզարշավ բնակչության շրջանում» փուլին կամավորության սկզբունքով: Իրականացվել է:

Բացատրական հանդիպումներ Գյումրի քաղաքի թվով 44 բազմաբնակարան շենքերի բնակչության շրջանում, որոնք Ուրբան ինստիտուտի կողմից նախապես ընտրվել էին, որպես ծրագրին մասնակցության թեկնածու շենքեր: Բացատրվել է ծրագրի բովանդակությունը, ծրագրին մասնակցելու համար շենքում կառավարման մարմին (համատիրություն) ունենալու անհրաժեշտությունը, համատիրության էությունը, հիմնադրման, գրանցման և գործունեության կարգը, ծրագրին մասնակցության կարգը, ծրագրում բնակչության պարտադիր ներդրում ունենալու անհրաժեշտությունը, ծրագրի իրականացման սկզբունքները և այլն: Բնակչությանը բաժանվել է ծրագրի հայտերը, աջակցություն է ցուցաբերվել շենքերում ընդհանուր ժողովների կազմակերպման և անցկացման հարցերում, ծրագրին մասնակցության հայտերի լրացման և կից փաստաթղթերի փաթեթի պատրաստման հարցերում:

▪ **Մասնակցություն «Հասարակայնորեն պահանջված կենտրոն» ծրագրին**

2002-2003թթ. կազմակերպությունը մասնակցություն է ունեցել Գյումրի քաղաքի «Մուշ-2» համայնքային կենտրոն հասարակական կազմակերպության կողմից «Եվրասիա» հիմնադրամի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող «Հասարակայնորեն պահանջված կենտրոն» ծրագրի «Բազմաբնակարան շենքերի կառավարումը համատիրության միջոցով» բաղադրիչին:

Ծրագրի շրջանակներում «Մուշ-2» թաղամասի և քաղաքի այլ տարածքների բնակիչների համար անցկացվել է համատիրության կառավարման դասընթաց, տրվել է խորհրդատվություն, «Մուշ-2» կենտրոնին է տրամադրվել բազմաբնակարան շենքերի կառավարման վերաբերյալ մեթոդական և օրենսդրական գրականություն, պատրաստվել և տարածվել են թվով 35 տեղեկատվական թերթիկներ, որոնք ներկայացնում էին բնակչության քաղաքացիական մասնակցության կարևորությունը ոլորտի հիմնախնդիրների լուծման գործընթացներում: Ծրագրի սկզբնական փուլում, «Մուշ-2» թաղամասում խիստ ցածր էր մասնավորեցված բնակարանների տոկոսը (մոտ 20%): Այդ պատճառով տրվել է խորհրդատվություն և իրականացվել է տեխնիկական աջակցություն թաղամասի բնակարանները մասնավորեցնելու հարցերով: Տրվել է տեխնիկական աջակցություն թաղամասի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմին՝ համատիրություն հիմնելու և գործունեություն ծավալելու ուղղություններով:

▪ **Տեխնիկական աջակցություն Գյումրի քաղաքում գործող համատիրություններին**

Իրականացվել է.

- Խորհրդատվության տրամադրում:
- Փաստաթղթային նյութերի պատրաստում:
- Բացատրական հանդիպումներ, համատիրության ընդհանուր ժողովներ, վարչության նիստեր, համատեղ քննարկումներ և այլ աշխատանք վարչության անդամների հետ:
- Միջնորդություններ, բանակցություններ, համատեղ քննարկումներ տեղական ինքնակառավարման մարմինների, կոմունալ ծառայություններ մատակարարող ընկերությունների, այլ մասնագիտացված կառույցների ղեկավարների և պատասխանատու պաշտոնատար անձանց հետ:
- Համատիրություններին օրենսդրական, այլ իրավական, մեթոդական նյութերի և գրականության, անհրաժեշտ փաստաթղթերի օրինակելի ձևերի տրամադրում:
- Աշխատանք միջազգային և ֆինանսավորող կազմակերպություններին ներգրավելու ուղղությամբ: